ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

մայիսի 2021 թվականի №Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄԻՏԱՍԻ ՓՈՂՈՑԻ №31 ՏԱՆ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՄԱՆ ՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի Կոմիտասի փողոցի №31 տան (այսուհետ՝ Առանձնատուն) սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացումն առանց միացման վճարի գանձման իրականացնելու վերաբերյալ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերություն ներկայացված՝ առանձնատան բնակիչ Նարինե Ասլանյանի (այսուհետ՝ Դիմող անձ) 2019 թվականի հոկտեմբերի 8-ի դիմումը,

բ) Հայաստանի Հանրապետության սոցիալական աջակցության Վաղարշապատի տարածքային գործակալության 2021 թվականի հունվարի 25-ի №292 տեղեկանքը, ըստ որի՝ Դիմող անձը հաշվառված է ընտանիքների անապահովության գնահատման համակարգում, և նրա ընտանիքի անապահովության միավորը կազմում է 34.67,

գ) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունքի համայնքի ղեկավարի 2019 թվականի օգոստոսի 21-ի №04703-84 տեղեկանքը, որի համաձայն՝ Դիմող անձը բնակվում է առանձնատանը,

դ) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2021 թվականի մարտի 1-ի №Ե-16-21 և Դիմող անձի 2021 թվականի մայիսի 4-ի գրություններն առ այն, որ առարկություն չունեն առանձնատան սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացումը սույն որոշմամբ սահմանված ընթացակարգով իրականացնելու վերաբերյալ,

և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշմամբ հաստատված՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների 13.8 կետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ Առանձնատան սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացվելու դեպքում միացման վճար չի գանձվում:
2. Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը՝ չի թույլատրվում Դիմող անձից պահանջել կատարելու վճարումներ, տրամադրել հատուցում, ներկայացնել տեղեկատվություն և փաստաթղթեր կամ նրան ծանրաբեռնել պարտավորություններով, եթե դրանք սահմանված չեն էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններով, այլ նորմատիվ իրավական ակտերով, սույն որոշմամբ կամ էլեկտրա-մատակարարման պայմանագրով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Դիմող անձին և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
մայիսի 2021 թ.